Արձանագրություն N 3

ՀԾԿՀ-19/5-ԳՀԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14 նոյեմբերի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Մեսրոպ Ղարիբյանը, Անուշ Սմբատյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը, բացակայում էր Նունե Գաբրիելյանը:

Օրակարգ
Նիստի կասեցման մասին

ՀԾԿՀ-19/5-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և արձանագրեց, որ 2019թ. նոյեմբերի 7-ին հայտերի բացման և գնահատման արդյունքում առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Գարանտ Աուդիտ» ՍՊԸ-ն, որը նշված օրվա դրությամբ ներառված է եղել minfin.am ինտերնետային կայքում հրապարակված հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում, սակայն սույն թվականի նոյեմբերի 13-ին պարզվել է, որ վերջինս արդեն բացակայում է հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկից:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը որոշեց դիմել է ֆինանսների նախարարություն՝ «Գարանտ Աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման փաստաթղթերը հրավերով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու հնարավարության վերաբերյալ պարզաբանում ստանալու համար:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից պարզաբանման տրամադրմանը հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0, բացակա 1:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լիլիթ Մկրտչյան

անդամներ _____ Ջուլիետա Բաբայան

_____ Մեսրոպ Ղարիբյան

_____ Անուշ Սմբատյան

քարտուղար _____ Էդգար Շադյան